

1866

2010

٢٤٤٦

(2)

ԱՆՄԻԶԱԿԱՆ ՓՐԿՈՒԹԻՒՆ

ՀԱՐԱԳՈՅՆ ՄԵՂԱԿՈՐԱՑ ՀԱՄԱՐ

——————

معارف عموميہ نظارات جلیلستانک ۱۴ جاذی الآخر ۳۰۳ و ۳۰۲
مارت ۳۰۲ تاریخی و ۲۷ نمبری و رخصتماد سیمه
و آمریقان مسیون شرکتی صدارفیله طبع و نشر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

205
Q. - 59

ԲԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՈՅԱՃԵԱՆ

1886

900
404-411

205 up.
U-59

200.
404-4P

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՓՐԿՈՒԹԻՒՆ

ԶԱՐԱԳՈՅՆ ՄԵՂԱԽՈՐԱՅ ՀԱՄԱՐ

Willy Hergenrother



مصارف امریقان مسیونر شرکت طرفندن تسویه اولن ورق
معارف عمومیه نظارت جلیله سنک ۱۴ جاذی الآخر ۳۰۳
مارت ۳۰۲ تاریخی و ۲۷ نورول رخصتماد سیله طبع و پنشدر

(1934)

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

U.S.

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. • ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ


1886

2001

30373-4.2

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՓՐԿՈՒԹԻՒՆ

ԶԱՐԱԳՈՅՆ ՄԵՂԱԽՈՐԱՅ ՀԱՄԱՐ



Ա. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԹՈՂՈՒԹԵԱՆ ՄԵՂԱՅ

Սիրելի ընթերցող, եթէ արդարեւ կը փափիս որ փրկուի հոգիդ, կամ, եթէ յօժար ես փրկուիլ քու մեղքերէդ, յանուն Պատուծոյ և անոր կողմանէ կը հրաւիրեմ զքեզ ընդունել անմիջապէս այն հաշտութիւնը զոր Աստուած կ'առաջարկէ քեզ, ընդունել բոլոր մեղցդ թողութիւն, և նոր բնութիւն որ կարող պիտի ընէ զքեզ վարել նոր կեանք մը. համառօտիւ, կ'աւետեմ քեզ անմիջական փրկութիւն անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի ձեռամբ այն վայրկենին որ կ'ընդունիս անոր այս հրաւերը Յայտ. Գ. 20: Եղեկ. ԼԳ. 11: Բ. կոր. Ե. 20: Զ. 2:

Հոգ չէ թէ դու ով կամ ինչ ես. Թէպէտ ըլլաս մեծադոյն մեղաւորն երկրիս վրայ, Աստուած է և կարող և յօժար փրկել զքեզ: Դու չես կրնար ըլլալ չարագոյն քան կորսուած մեղաւորը. և մինչ եկած է Յիսուս վնտուել և փրկել կորսուածը եկած է վնտուել և փրկել

3037-58

նաև գքեղ։ Ես. Ա. 18։ Ղուկ. Ժ. Թ. 10։ Մատթ. Ժ. Ա. 28։ Կը զլկէ քեղ պատգամ ողորմութեան և սիրոյ, խնդրելով քենէ և աղաչելով հաշտուիլանոր հետ և կ'ընծայէ քեղ զինք ըլլալ քու ֆրկիշդ եթէ դու ըլլաս յօժար միայն յանձնել զքեղ անոր որպէս զի փրկուիս։

Զպահանջեր քենէ ընել քու կողմանէդ որ և իցէ բան գործելու համար փրկութիւնդ, վասն զի դիտէ թէ բան մը չես կրնար ընել։ Չես կրնար քաւութիւն ընել մեղացդ համար և ոչ իսկ փոխել սիրտ։ և յորչափ փոխուած չէ սիրտ, չես կրնար մինչեւ իսկ բարեկարգել կեանքդ աշխարհի մէջ։ Աստուած դիտէ ասոնք բոլոր, և սակայն կ'առաջարկէ փրկել զքեղ։ և բոլոր բանը զոր նա կը պահանջէ քենէ, այս է որ հաւանիս յանձնել զքեղ անոր ձեռքը ճիշդինչակէս որ ես, և թողուս անոր ընել ամէն բան քեզի համար։ Մատթ. Ժ. Ա. 28։ Տիտ. Գ. Յ. Հովովմ. Ե. 6։ Եփես. Բ. 4, 5։ Մատթ. Լ. 18։ Ովս. Ժ. Գ. 9։ Ունկն դիր ուրեմն մինչ կը խօսիմ այս մեծ փրկութեան վրայ։

Թէ ինչպէս Աստուած յայտնեց եւր սէրը։

Երբ մարդ մեղանչեց Աստուածոյ դէմ, Աստուածոյ արդարութիւնը պահանջեց որ մեռնի նա։ Ասուրբ դիրք կ'ըսէ, «Ոնիծեալ ըլլայ ամէն մարդ՝ որ օրէնքին դիրքը ամէն դրուածնեւ»

ըուն մէջ չկենար՝ որ զանոնք կատարէ» (Դաղ. Գ. 10), և «Ով որ . . . մէկ բանի մը մէջ յանցաւոր ըլլայ, անիկա ամենուն պարտական կ'ըլլայ։» Յակ. Բ. 10։ Վասն որոյ մի մեղք մեղաւոր կ'ընէ մինչեւ իսկ հրեշտակ մը, և Աստուածոյ բարկութիւնը կը մնայ անոր վրայ այն մի մեղաց պատճառաւա։ Մի գողութեամբ մարդկ'ըլլայ գող, և մի սպանութեամբ կ'ըլլայ մարդասպան։ Նմանապէս մի մեղքով մարդ կ'ըլլայ մեղաւոր, մինչեւ անգամ եթէ նա բնաւորիշ մեղք չգործէ այնուհետեւ իւր կենացը մէջ։

Ուրեմն մարդ ի՞նչպէս կրնար զերծ մնալ Աստուածոյ անէծքէն, և սակայն միանգամայն տեղն երթալ Աստուածոյ արդարութիւնը։ Մի միայն միջոց կար, և էր այս որ Աստուածոյ Որդին մեռնէր, եթէ ոչ բոլոր մարդիկ կորսուելու էին։ Առանց արիւն թափուելու չէր կրնար ըլլալ թողութիւն մեղաց, և չկար ուրիշ արիւն քաւութիւն ըլլալու մեղաց համար բայց միայն Յիսուսի արիւնը։

Բայց ենթագրենք թէ հրեշտակ մը կամ որ և իցէ ուրիշ արարած մը կարող ըլլար քաւութիւն ընել մեղաց համար։ և սակայն մինչեւ անգամ այդ բանով չէինք կրնար փրկուիլ, այլ հարկ էր նաև փոխուէին մեր սիրտերը և տրուէր մեղ նոր և սուրբ բնութիւն։ Զայս

կրնար ընել ոչ ոք բայց միայն կենդանի Աստուծուծոյ Հոգին, որ առատութեամբ կը թափուի մեր վրայ թիսուս Քրիստոսի ձեռօք ։ Տիտ. Գ. 6: Վասն որոյ ոչ ոք բայց միայն Աստուծոյ Որդին կրնար ըլլալ մեղ Փրկիչ ։ Եբր. Թ. 22: Ժ. 4. Թ. 14: Յով. ։ Գ. 5: Ա. Տիմ. Ա. 15: Սակայն Աստուծած այնշափ սիրեց զմեղ, որ չխնայեց իւր միածին Որդւոյն, այլ ձրիապէս մատնեց զնա մահուան մեղ ամենուս համար ։ Յով. ։ Գ. 16: Հռովմ. Բ. 32:

Վասն որոյ Յիսուս եկաւ աշխարհ մեռնել մեղաւորաց համար ։ Փառաց Ցէրն եղաւ մարդ, ծառայի կերպարանք առնլով, հնազանդելու համար մեր կողմանէ Աստուծոյ օրէնքին, և կրելու մեր մեղաց պատիժը ։ Թափեց իւր արիւնը խաչին վրայ մեղաց քաւութիւն ընելու համար ։ Այսպէս տեղը գնաց Աստուծոյ արդարութիւնը ։ Նա յարեաւ ի մեռելոց, և զրկեց իւր աշակերտաները բոլոր աշխարհ քարոզել Աւետարանը, խոստանալով թէ ով որ հաւատայ յանուն նորա՝ չկորսուի, այլ ընդունի յաւիտենական կեանք ։ Ա. Տիմ. Ա. 15: Փրկիպ. Բ. 6, 7: Ես. ԾԳ. 5: Մատթ. ԻԶ. 38: Ա. Պետ. Բ. 24: Կող. Ա. 20: Հռովմ. Գ. 25: Մարկ. Ժ. 15, 16: Յետոյ համբարձաւ յերկինս, և զրկեց իւր Սուրբ Հոգին համոզել և դարձունել մեղաւորները, և բնակել հաւատացելոց

սիրտերուն մէջ և յարուցանել զնոսա վերջին օրը ։ Գործ. Բ. 33: Յով. ։ Ժ. 8: Հռովմ. Բ. 9—11: Ա. Կոր. ԺԵ. 45:

Ինչպէս երբ տեռատես կինը դպաւ Յիսուսի հանդերձին, ելաւ անկէ զօրութիւն և բժշկեց կինը (Մարկ. Ե. 27–30), նայնպէս և մեւ զաւորն այն վայրկենին որ կ'ընդունի զբրիսա տաս իբրև իւր Փրկիչը, կ'ընդունի զՍուրբ Հոգին Քրիստոսի անձէն, որ թէպէտ յերկինս է այժմ, սակայն կը ցուցնէ թէ է ներկայ, կենադանի և կենսատու Փրկիչ։ Ա.յն վայրկենին մեղաւորը կը ծնանի վերստին, ընդունելով նոր կեանք և նոր բնութիւն, և քանի որ Յիսուսի հոգին այնուհետեւ կը բնակի անոր մէջ, կ'ըլլայ Քրիստոսի հետ միւ Քրիստոս կ'ըլլայ զլուխ և նա մին անոր անդամոյ, և այնպէս կը միանայ Քրիստոսի հետ որ դատապարտութիւն չմնար անոր ։ Հռովմ. Բ. 10: Ա. Կոր. ԺԵ. 45: Յով. ։ Գ. 3: Ե. 24: Ա. Կոր. Գ. 16: Եփես. Ե. 30: Ա. Կոր. ԺԵ. 3: Հռովմ. Բ. 35: Եբր. Բ. 14: Հռովմ. Բ. 1:

Այս է ուրեմն Աւետարանը. Յիսուս Քրիստոս, Եաւաւը, իւր արեամբ որ բաւական է քաւել բոլոր աշխարհի մեղքը, Յիսուս Քրիստոս, արբարը, իւր արժանեօք որ բաւական է երկինք առնուլ բոլոր աշխարհը, Յիսուս Քրիստոս, հզը Աստուծունը, որոյ կենդանի հոգին կա-

ըող է ի կեանս յարուցանել բոլոր աշխարհը,
կ'ընծայէ զի՞նք քեզ:

Զի՞ք տարակցու, ուրեմն, թէ դու ի՞նսու հըբ-
իւնէլ, և թէ կրնաս փրկուիլ հիմ, ճիշդ ինչպէս
որ ես այդ տեղն ուր կը նստիս հիմա կամ կը
կանգնիս, առանց սպասելու մինչև ըլլաս ա-
ւելի բարի կամ արժանի քան որչափ ես հիմա,
և չկայ բան որ կարող ըլլայ արգելել զքեղ
անկէ բայց միայն քու կամքդ ։ Զկրնար ար-
գելել զքեղ անկէ քու մեղացդ մեծութիւնը՝
վասն զի Յիսուս Քրիստոսի արիւնը կը սրբէ
ամէն մեղքէ, և ոչ մեղաց իշխանութիւնը
քու վրադ, որմէ որպէս թէ կարող չես պըր-
ծիլ, վասն զի այդ է նաև իւրաքանչիւր մե-
ղաւորի վիճակը մինչ տակաւին եկած չէ առ
Յիսուս. բայց քանի որ դուն կ'ուզես փրկուիլ
մեղաց գերութենէն, այդ փոխանակ արգելը
ըլլալու, զօրաւորագոյն պատճառ է մանաւանդ-
ցուցնելուքեղ թէ ինչու համար իսկոյն ընդու-
նելու ես անոր հրաւելը ։ Եթէ կայ մի միայն
արգելք՝ այս է որ մեղաւորը կամովին կ'ընտրէ
շարունակել մեղաց մէջ, և կ'ուզէ մանաւանդ-
վասնդի նշաւակ ընել իւր հոգւոյն փրկութիւնը
քան թէ յանձնել զի՞նք Քրիստոսի՝ աղատելու
համար մեղաց իշխանութենէն :

Բ. ՍԽԱԼ ԳԱՂԱՓԱՐՔ ԴԱՐՁԻ ՎՐԱՅ

Քրիստոնէութեան վրայ մարդոց ընդհանուր
դաղափարին նայելով անհնար է այս անմի-
ջական փրկութիւնը ։ Կը համարուի թէ դարձը
կ'ըլլայ աստիճան առ աստիճան, և կը պա-
հանջէ շատ ժամանակ և եռանդուն յարատե-
ւութիւն մինչև Աստուած զմեղաւորն ընդունի,
և անոր մեղաց թողութիւն տայ ։ Կը համարուի
թէ Յիսուսի արիւնը, թէպէտ կը սրբէ ամէն
մեղքէ, կրնայ օգտակար ըլլալ այնպիսեաց
միայն որ կը զզչան անկեղծութեամբ և կը
դառնան իրենց չարութիւններէն, և թէ այս
զզումը կամ ապաշխարութիւնը ըլլալու չէ
դժոխքի վախէն այլ ըլլալու է ցաւ Աստուածոյ
ուզածին պէս, և վասն զի վշտացուցած են այն-
պիսի բարերար և սուրբ Աստուած մը ։ Կը հա-
մարուի թէ հարկ է աղաղակել եռանդեամբ
և յարաժամ վասն ողորմութեան, որպէս զի
հնար ըլլայ ստանալ զայն, և թախանձող
այլոյն առակը և Սուրբ Գրոց այսպիսի հա-
մարները. “Զանք ըրէք որ նեղ դռնէն մըտ-
նէք,” և “Երկնից թագաւորութիւնը ուժով
կ'առնուի, և ուժեղները կը յափշտակեն անի-
կա,” կը համարուին հաստատել թէ մեծ անձ-
կութիւն և երկարժամանակեայ ջանք և աշ-
խատութիւն պէտք է փրկուելու համար :

Արդ՝ թէպէտ այս գաղափարները երեխն ճըշ-
մարտանման, բոլորովին սխալ կը ներկայացու-
նեն սակայն Քրիստոսի Աւետարանը, Այս ամէնքը
կը կենան սխալ հիման մը վրայ, քանզի մե-
ղաւորը կը դրուի այն տեղը ուր պէտք էր դնել
Փրկիչը, և գրկիչը կը դրուի այն տեղը ուր
պէտք էր դնել մեղաւորը. վասն որոյ չէ զար-
մանալի եթէ ապարդիւն կ'ըլլայ վախճանը:
Սուրբ Գիրք կը ներկայացունէ զՓրկիչն իբրև
կանդնած մեղաւորին սրտին դուռը, ուր կը սպա-
սէ և կը յոզնի, և մինչև իսկ կ'աղաչէ մտնել
ներս: Եւ ինչ որ պէտք է, բոլորն այս է որ
մեղաւորը բանայ դուռը: Բայց մարդիկ կը ներ-
կայացունեն զմեղաւորն իբրև կանդնած Փրկիչն
սրտին դուռը, զոր կը բաղիչն նա և կը սպասէ
մինչև որ բացուի: Ո՞րչափ հակառակ է այս
Սուրբ Գրոց ներկայացուցածին: Փրկչին դուռը
արդէն բաց է. ինչո՞ւ համար բաղիչն զայն
մեղաւորը: Ապաքէն Փրկիչը կանդնած է այդ-
դուռը, կ'աղաչէ զմեղաւորը բանալ որ մտնէ
ներս. ուրեմն սա ինչո՞ւ համար կանդնի դուրսը
կամ յապաղէ սպասելով ուրիշ վայրկենի՝ ըն-
դունել ներս մտնելու և փրկուելու հրաւերը:
Սուրբ Գիրք կը ներկայացունէ զՓրկիչն իբրև
հովիւ որ կը փնտուէ կորուսեալ ոչխարը ան-
հաւատութեան լերանց վրայ և կը կոչէ զնա
դառնալ յետո: Աւետարանին վրայ այն թիւր

տեսութիւնը կը ներկայացունէ զմեղաւորը
կանգնած փարախին փակեալ դուռը, որ կը
կոչէ զնովիւր բանալ իրեն, և թոյլ տալ մտնել
ներս: Սուրբ Գիրք կը պատուիրէ մեղաւորին
հաւատալ և ընդունել փրկութիւնը որ ձրի կը
դրուի անոր առջև. բայց Աւետարանին վրայ
այն թիւր տեսութիւնը կ'ըսէ մեղաւորին թէ ոչ
միայն պէտք է նմա աղօթել փրկուելու համար,
այլ նաև թէ պէտք է շարունակ աղօթել առանց
ըլլալու վատահ թէ ընդունած է փրկութիւնը:
Ոչ, բարեկամ, դու մինչև իսկ չունիս պէտք
աղօթել անոր համար. դու կընաս ստանալ
զայն հաւատալով միայն և ընդունելով զայն:
Եթէ, մինչ մենք էինք տակաւին մեղաւոր,
Աստուած տուալ իւր Որդին որպէս զի հաշ-
տուինք, թշնամութիւնը բոլորովին մեր կողը-
մանէ է և ո՛չ Անոր կողմանէ: «Ուրեմն Քրիս-
տոսի կողմանէ դեսպանութիւն կ'ընենք, իբրև
թէ Աստուած է բարեկամ մեղմով. կ'աղաչենք
ձեզի Քրիստոսի կողմանէ, հաշտուեցէք Աս-
տուծոյ հետ:»

Արդարեւ ես կ'ուղեմ որ իւրաքանչիւր մե-
ղաւոր աղօթէ տաղնապով փրկութեան համար.
բայց այդ չէ դարձ, քանզի չէ հաւատք: Դարձ
միայն անատեն կ'ըլլայ երբ մեղաւորը կը հա-
ւատայ թէ յօժար է Աստուած փրկել զնա, և
թէ յաւիտենական կեանքը զոր կ'ընդունի՝ ձրի

կը տրուի անոր ի ձեռն Քրիստոսի և կը ստաշնայ իւր մեղաց թողութիւնը ։ Դարձ միայն անատեն կ'ըլլայ երբ նա կը հաւատայ վկայութեանը թէ Աստուած տուաւ իւր Որդին, վասն զի “վկայութիւնը աս է, որ Աստուած մեղի յաւիտենական կեանք տուաւ, ու աս կեանքը անոր Որդւոյն մէջն է ։ Են որ Որդին ընդունած է կեանք ունի, և ան որ Աստուածոյ Որդին ընդունած չէ կեանք չունի” ։ Յովհ. Ե. 11, 12. Եթէ ստուգիւ կ'ուզես ընդունել զբրիստոս, բոլոր բանը զոր ընելու ես՝ է յայտնել այս քու վափաքդ, և ահա գործը կատարուած է ։ Դադարէ ուրեմն, ըսելէ անհաւատի պէս, իբր թէ ուստուած յայտնեց քեզ զայն, և իբր թէ դու միայն անձկութիւն ունիս հոգւոյդ Քրիութեան համար, և Աստուած՝ ոչ։

Ստիպել զմեղաւորը որ ազօթք ընէ փոխանակ հաւատալու, ոչ միայն անպատիւ ընել է զԱստուած, այլ և մնասակար է մեղաւորին ։ Մեղաւորը կ'ազօթէ և կը սպասէ, և մինչև իսկ շատ կը տաղնապի երբ կ'ազօթէ, սպասելով մինչև որ ընդունի նշան մը թէ Աստուած պատասխանեց անոր, և որովհետև չզգար փոփոխութիւն մը, կը կարծէ թէ Աստուած միտք չունի Քրիստու զնա ։ Կը նայի իւր ներսը որպէս զի գտնէ բան մը որուն վրայ գնէ իւր

յոյսերը, բայց որչափ աւելի կը նայի իւր ներսի դին այնչափ աւելի կը գտնէ վախցունող բաներ։ Մինչև չընդունած Քրիութիւնը, չկրնար կատարուիլ փոփոխութիւնը զոր կը փնտուէ ։ Վասն որոյ զարմանալի չէ որ չկրնար տեմանել զայն ։ Եկրն, ուրախութիւնը և խաղաղութիւնը կը ստացուին Հայոցնելով խստմանց ։ մինչև որ ըլլայ այս վստահութիւնը՝ անոնք չեն գալ ։

Ապաշխարունեան

Բայց կը հարցունես, թերեւս, Զպարտիմ ապաշխարել զբրիստոս ընդունելէ առաջ ։ Կը պատասխանեմ. Եթէ ապաշխարութիւն ըսելով հասկցունել կ'ուզես ինչ որ հասկցունել կ'ուզէ Առւրբ Գիրքը, այսինքն մտաց փոփոխութիւն, անատեն կ'ըսեմ “Այո՞” Դու Պարուա ապաշխարել, վասն զի այդ է ինչ որ Աստուած կը պահանջէ քենէ ընել հիմա ։ Բայց Եթէ ապաշխարութիւն ըսելով հասկցունել կ'ուզես Աստուածութիւն մեղաց համար, անատեն կ'ըսեմ “Դու չես կրնար արտմիլ Աստուածոյ ուզածին պէս մինչև որ չնորոգուի սիրտդ ։” Աստուածոյ ուզածին պէս արտմիլ նորոգուած սրտին յատկութիւններէն մին է ։ և այդ կրնայ ստացուիլ հաւատալով միայն ։ Ուրեմն Եթէ դու ստանալու ես այս նոր բնու-

թիւնը Քրիստոսի գալէդ առաջ, պէտք չես ունենար գալ առ Քրիստոս ընդունելու համար զայն։ Եւ եթէ սպասես մինչեւ որ ունենաս Աստուծոյ ուղածին պէս տրտմութիւն մեղաց համար, որ երբէք պիտի չդաս առ Քրիստոս։

Մի միայն բանը դոր կրնաս ունենալ առ Քրիստոս գալէդ առաջ՝ է մեղքի զգացումը, դժոխքի երկիւղը, և փափաք հանդստեան։ Ոչ Աստուծոյ սէրն է, և ոչ իսկ իրական ատելութիւնն ընդգէմ մեղաց զոր կըզդայ անդարձ մարդը։ Թերեւ կը զզուի քանի մը մեղքերէ զրոս գործելու չունի միտում, նաև թերեւ կ'ատէ իսկ այն մեղքերը զրոս կը գործէ, բայց ոչ այն պատճառաւ որ անոնք մեղք են Աստուծոյ դէմ և նախատինք են անոր։ և առանց այսպիսի զգացում ունենալու մարդ չկնար Աստուծոյ ուղածին պէս տրտմիլ։

Ապաշխարութիւնը որ կը յիշուի Սուրբ Գրոց մէջ է փոփոխութիւն մտաց և ոչ փոփոխութիւն սրտի։ Զէ այն Աստուծոյ ուղածին պէս տրտմութիւն մեղաց համար։ քանզի այդ զգացումը ոչ ոք բայց միայն Աստուծոյ զաւակ մը կրնաց ունենալ։ տրտմութիւն մի է այն որոյ հարկ է ըլլալ դարձէն երտը, բայց որ չկրնար դանուիլ դարձէն առաջ։ վասն զի է մին ապացոյցներէն որովք դիտնալու ենք թէ թողու-

թիւն ընդունած էն+ մեր մեղաց։ Ապաշխարութիւնն է մարդուս վարուց փոփոխման կէտը, երբ կը տեսնէ մարդ թէ թշուառ է, և կը դառնայ առ Քրիստոս իրբեւ առ իւր մի միայն յոյսն փրկութեան։ Նա այսպէս կը փօխէ իւր միտքը, կ'ապաշխարէ և կը հաւատայ Աւետարանին։ Անառակ որդին ապաշխարեց երբ ելաւ խողերուն փարախէն դառնալ իւր հօրը, ըսելով, « Քանի բանուորներ կան իմ հօրս տունը հացով լիցուած, ու ես հոս սովամահ կը կորսուիմ։»

Այս էր ապաշխարութիւն, այսինքն մոքի փոփոխութիւն։ և ցաւը որ զգաց իւր մեղաց համար և ամօմք՝ իւր հօր հետ այնպէս վարուելուն պատճառաւ, սասակի էր երբ համը բուրեց զնա հայրը և վերստին ընդունեց իբրեւ որդի։

Բայց ոչ ապաքէն ըսուած է, « Ճանք ըրէք որ նեղ գռնէն մտնէք։» Ղուկ. ԺԴ. 24։

Այս, ըսուած է այդպէս։ բայց թէպէտ նեղ է գուռը, սակայն բաց է և ոչ գոց, և կուիւը ոչ թէ դրան պահապանին հետ է այլ բունքու անհաւատ և չար սրտիդ հետ, որ սասափիկ կը ճգնի արգելել զքեղ ներս մտնել։ Նեղ է գուռը, բայց տակաւին է բաւական լայն, այնպէս որ մեղաւորը կրնայ մտնել անկէ եթէ չջանայ հետ առնուլ իւր կուռքերը։

Թերեւս ուխտէ յօժարամիտ հրաժարել նախ այս ինչ մեղքէ և յետոյ ուրիշ մեղքէ մը, բայց մինչև որ չըլլայ յօժար բաժնուելու իւր բուլոր մեղքերէն, չկրնար մտնել անկէ ներս :

Թերեւս վերջին բանը որմէ կ'ուզէ հրաժարել իւր ներս մտնելէն առաջ՝ է իւր անձին արդարութիւնը : Թերեւս յօժար է մտնել անկէ իւր մէկ ցնցոտի հանդերձով ինքզինք ծածկած, բայց անհնար է այդ : Զարմանալի չէ ուրեմն որ կը կոչուի այն՝ նեղ դուռ : Եւ սակայն այն վայրկենին որ նա կը հաւանի մտնել ներս ձեռնունայն և մերկ, անօգնական և անանկացած, ամէն բանի համար վատահերով թիսուսի, կ'անցնի անկէ առանց որ և իցէ գըժուարութեան : Մէկ մոքով, այս կրնայ կոչուիլ աստիճան առ աստիճան մտնել նեղ դռնէն . բայց ասկէ աւելի աղէկ կերպ մը կայ : Աւելի հաճելի է Աստուծոյ և աւելի կը պատուի նա եթէ անմիջապէս և առանց պայմանի հպատակի մարդ Աստուծոյ : Բայց սա ևս յաւելունք թէ այն չէ աստիճան առ աստիճան դառնալ առ Աստուծած . վասն զի ներս մտնելն եթէ տեղի ունենայ՝ է վայրկենական գործ. քանզի անկարելի է որ և իցէ մարդու՝ ըլլալ թէ ներսը և թէ դուրսը մի և նոյն ժամանակ :

Բայց ո՞չ ապաքէն ըսուած է թէ “Շատերը մտնել պիտի ուզեն և պիտի չկրնան :” Ա.յո,

ըսուած է այդպէս, բայց այն ատենուան համար՝ երբ միանգամ տանուտէրը կ'ելլէ և կը գոյէ դուռը, և յետոյ, ինչպէս կը կարդանք, ջանալն ամօդուտ է : Փրկութեան գործոյն մէջ Աստուծոյ առ Եղանակն հրանցէն է որ կը բանայ դուռը թէպէտ ըլլայ այն նեղ . բայց երբ մեզաւորը պէտք կ'ունենայ աղազակել առ Աստուծած բանալու համար դուռը, անասեն շատ ուշ է : “Որովհետեւ ես կանչեցի, ու դուք չուզեցիք լսել . յեւու երիցնուցի, ու մտիկ ընող չեղաւ . ես ալ ձեր թշուառութեանը վրայ պիտի ծիծաղիմ, ու ձեր վախը համնելուն՝ ծաղը պիտի լնեմ : Երբոր ձեր վախը հեղեղի պէս համնի, ձեր թշուառութիւնը մըրիկի պէս պատահի, և ձեր վրայ նեղութիւն ու տառապանք գայ, անորդն ննջի պիտի աղազակն, ու պատասխան պիտի շտամ . զիս պիտի փնտուեն ու պիտի չկրնան գտնել :” Առակ. Ա. 24—28 :

Բայց ո՞չ ապաքէն ըսուած է, “Դուռը զարկէք և պիտի բայցուի ձեղի :” Եւ ո՞չ ապաքէն ունինք բաց ուրիշ տեղերէ Սուրբ Գրոց, առակներ, զոր օրինակ թախանձող այրւոյն, և բարեկամին՝ որ պէտք ունէր երեք նկանակի, որք կը ցուցնեն թէ, թէպէտ աղօթք չլսուին ի սկզբան, անշուշտ պիտի լսուին ի վերջոյ :

Ա.յո, ըսուած է այդպէս, բայց այս խոստմանց ամէնքն են Աստուծոյ որդւոց ի Քրիս-

տոս Յիսուս, և մի միայն պատճառը թէ ինչո՞ւ համար Աստուած չտար անոնց անմիջապէս ինչ որ կը խնդրեն անոնք, այս է որ նա է անոնց երկնաւոր Հայրը, և ազէկ գիտէ թէ ի՞նչ և ե՞րբ տալու է անոնց: Աստուծոյ որդիք ունին աշխարհիս մէջ շատ փորձութիւններ և գժուարութիւններ, և նա կը հրաւիրէ զանոնք բերել անոր՝ բոլոր իրենց կարօտութիւնները և ցաւերը: Բայց պիտի չըլլար օգտակար անոնց, և ոչ Աստուծոյ փառաց պիտի ծառայէր, եթէ այս փորձութիւնք վերնային այն վայրկենին որ անոնք կը խնդրեն անկէ վերցունել զանոնք: Ի վերայ այսր ամենայնի Աստուած կ'ուզէ որ ազօթեն անոնք շարունակ և կը վստահացունէ զանոնք թէ ունի հայրական սէր առնոսա, մինչև իսկ երբ չպատասխաներ անոնց, և կը խոստանայ անոնց թէ երբ գայ յարմար ժամանակը, շուտով իրաւունք պիտի ընէ իւր ընտրեալներուն: Երբ մարդ կը հաւատայ Քրիստոսի, արդեամբք կը ստանայ «ամէն բան», վասն զի ամէն բան անորն է (Ո. կոր. Գ. 22), բայց օգտակար պիտի չըլլայ անոր ստանալ ամէն բան միահաղոյն: Ժառանգէ նա, բայց դեռ չէ ի չափ հասեալ, և Քրիստոս որ է անոր դաստիարակը և կառավարիչը, և առ որ դիմել հրամայուած է ամէն բանի համար, պիտի տայ անոր ինչ որ է օգտակար և բարի, և պիտի ազատէ զնա ամէն:

18034-58
1004
1005

Նեղութենէ յարմար ժամանակին: Ոչ թէ Աստուծոյ միահեծան տէր ըլլալը, այլ անոր սէ՛րն է որ կ'արդելէ զնա իրաւունք ընելէ իւր ընտրելեաց այն վայրկենին որ կ'աղաղակեն անոր:

Սակայն մեծ սխալ է համարել թէ ինչ որ է արտօնութիւն հաւատացելոց՝ է նաև չարիք մեղաւորաց: Բնաւ չկրնար օգտակար ըլլալ մնալ Աստուծոյ բարկութեան և անէծքին ներքե, ըլլալով թշնամի Աստուծոյ և գերի մեղաց մինչև մի վայրկեան իսկ: Եթէ Աստուած ստուգիս խոստացած է փրկութիւն անոնց որ կ'աղօթեն փոխանակ անոնց որ կը հաւատան, անհաւատից առաջին աղաղակն իսկ պիտի ընդունէր պատասխան, վասն զի չկայ սէր ուր կը զլացուի ողորմութիւն:

Թերեւս ըստի նաև, Ոչ ապաքէն մաքսաւորն աղաղակեց ողորմութեան համար, և ոչ ապաքէն Քրիստոս մեր առջև կը դնէ զնա իւրեւ օրինակ նմանելի: Այս, բայց անոր աղաղակն էր աղաղակ հաւատոյ, պատրաստ՝ ընդունելու Քրիստոսի քաւութիւնը իւրեւ մաքրարար իւր մեղաց: Վասն որոյ պէտք չընէր նա սպասելու իւր մեղաց թողութեան, գնաց իւր տունը արդարացած նոյն իսկ հաւատալու գործոյն մէջ:



Գ. ՆԱԽԱԿ-ԿԵՆՍՅ ԵՒ ՀԱԽԱՏՔ

Ուրեմն ի՞նչ ընել պէտք է ինձ որ փրկուիմ։ Կը պատասխանեմ։ “Հաւատա Ցէր Յիսուս Քրիստոսին, ու պիտի փրկուիս ։” Գործ։ ԺԶ։ 31։

Բայց պիտի պատասխանես թերես, “Ես միշտ հաւատացած եմ, բայց չեմ փրկուած։ Գիտեմ Քրիստոնէութեան վարդապետութիւնները և չունիմ տարակոյս անոնց ճշմարիտ ըլլալուն, բայց դեերուն նման միայն կը հաւատամ, ուստի և կը դողամ։”

Դու հաւատք կը կօչես զայդ, բայց չէ հաւատք, քանզի ցորչափ քու ռէրտէ հստանէր, հաւատք չէ այն, այլ հայութաբ միայն։ Զմեղ փրկող հաւատքն է ինչպէս գլխոյն՝ նոյնպէս և սրտին հաւատքը, վասն զի կ'ըսէ Պօղոս (Հռովմ. Ժ. 10), “Սրտով կը հաւատայ մէկը արդարանալու։” Դուն կը հաւատաս թէ Քրիստոս կը տրուի քեզ Աւետարանին մէջ, բայց եթէ սիրտդ չնուրունէր զնա, և չունի Հարահունէն անոր վրայ, չես հաւատաք Ցէր Յիսուս Քրիստոսի, և վասն որոյ չես կընար փրկուի։ Դու հաւատալու չես Հարդարէ ռունէն միայն, վասն զի այդ է գաղափար միայն, դու հաւատալու ես նոյն ինքն Յիսուս Քրիստոսի և անաւաեն կը վստահիս անոր իբրև մի անչին։ Բացատրեմ զայս օրինակաւ մը։ Եթէ գանուէիր նաւի մը մէջ որ զարնուած

ըլլալով քարի, արագ լեցուէր ջրով, և եթէ գայի կենաց-նաւակով և ըսէի քեզ թէ “Ահա նաւը կ'ընկղմի և չուտով պիտի իջնէ ջրոյն տակ, բայց եթէ ելլես նաւէն, և գաս կենաց-նաւակը, անշուշտ պիտի ազատեմ զքեզ,” այս պիտի ըլլար նման Աւետարանին պատգամին և աւետակին դէպի կորսուող մեղաւորն, և կընար ըսուիլ, “Եթէ հաւատայիր ինձ պիտի փրկուէիր։”

Բայց եթէ ըսէիր, “Ոչ, ես չեմ հաւատար թէ բանն այնպէս գէշ է ինչպէս կը ներկայացունես դուն, քանզի թէպէտ գտնուի թերես ծակ մը նաւին վրայ, այնչափ մեծ չէ և ջրհան գործածելով կարող պիտի ըլլանք պարպել ջուրը և բերել զայն ցամաք։” Եւ եթէ դույաղողէիր ազատել անձդ ջրհան գործածելով, կընար ըսուիլ թէ այս կ'ըլլար հրէն-նէն ուս անհանձն գործերուն, ուր ընդհակառակին, եթէ թուղուիր քու աշխատութիւնդ ազատել նաւը և իսկոյն ցատկէիր կենաց-նաւակը, այս կընար կոչուիլ հաւատալով հրէն-նէն։

Բայց եթէ ըսէիր, “Կը հաւատամ ամէն խօսքերուդ զորս կ'ըսէս ինձ, գիտեմ թէ նաւը պիտի իջնէ ջրոյն տակը, և թէ անկարելի է ջրոյն երեսը պահել զայն՝ ջուրը ջրհանով պարպելով, գիտեմ թէ, եթէ մնամ նաւին մէջ, պիտի ընկղմիմ, բայց եթէ մտնեմ կենաց-նաւ-

ւակը, պիտի ազատուիմ։ Սակայն իմ բոլոր
բեռներս են նաւին մէջ, և չեմ կրնար հա-
մողուիլ թէ զատուելու եմ անոնցմէ։ Գիտեմ
նաև թէ յիմարական է այս խորհուրդս, բայց
զիարդ և իցէ չեմ կրնար չընել այնպէս։ Վասն
որոյ պիտի մնամ նաւին մէջ որշափ ատեն որ
կրնամ, և սակայն հաստատ որոշած եմ ցատ-
կել կենաց-նաւակը նաւը ջուրին տակ չիջած։”
Ի՞նչ տեսակ հաւատք պիտի կոչէիր զայս Յա-
կոբոս առաքեալ (Գլ. Բ. 17) կը կոչէ զայս
ժաւեալ հաւատք, վասն զի է հաւատք առանց
դործոց, չունի գործնական արդիւնք ։ Եթէ
հաւատք է ճշմարիտ և ոչ գաղափար միայն,
պիտի ժողովու հաւատոյդ համաձայն, եթէ ոչ
տարակուսելի կ'ըլլայ մինչև իսկ քու դաղա-
փարիդ անկեղծութիւնը։

Կը տեսնես, ուրեմն, թէ ինչպէս պարզ է
հաւատոյ խնդիրը։ Դուն ես ընկղմող նաւի մը
մէջ որ պիտի իջնէ ջրոյն տակը կանուխ կամ
ուշ, զքեղ ևս տանելով իրեն հետ ի կորուստ
յաւիտենական, բայց Յիսուս Քրիստոս է կե-
նաց-նաւակը որ զբկուած է Հայրէն աշխարհ
Փրկել զքեղ։ Նա կուգայ և իւր վրայ կը հրա-
ւիրէ ուշադրութիւնդ, ըսելով քեղ թէ ի վր-
տանդի ես, և աղաշելով զքեղ երթալ առ նա,
որպէս զի վրկուիս Բոլոր բանը զոր ընելու ես,
է հաւանել անոր հրաւերին և ընդունել զայն, և

այն վայրկենին որ կ'ընես այսպէս, ապահով
ես ։ Հոգ չէ թէ որչափ մեծ են մեղքերդ . և
կարող է նա և յօժար ընդունել զքեղ ինչ-
պէս որ ես ։ Բնաւ ըսած չէ որ և իցէ մարդու,
“Բու մեղքերդ այնչափ ծանր են որ կարող
չեմ կրել զանոնք, իմ նաւակս բաւական զօ-
րաւոր չէ և ոչ բաւական մեծ կրել զքեղ։
Եթէ ըլլայիր նուազ մեղաւոր կրնայի առնուլ
զքեղ, բայց քու մեղքերդ շատ մեծ են և կա-
րող չեմ կրել զանոնք, վասն որոյ թողլու եմ
զքեղ որ կորսուիս։” Ոչ, թէպէտ քու մեղ-
քերդ ըլլան տասնապատիկ աւելի քան որչափ
են այժմ, “բոլորովին կարող է ապրեցնելու
անոնք՝ որ իրմով Աստուծոյ կուգան։” Եբր.
Է. 25։

Պիտէ նաև թէ քու վրկութիւնդ կախեալ է
հիմա ուս հաւանութենէդ և ոչ Աստուծոյ ։
Աստուած արդէն հաւանած է վրկել զքեղ,
կամ լաւ եւս ասել, պատրաստոած է ամէն
ինչ որ պիտոյ է քու վրկութեանդ համար, և
այս է աւելի բան լմել քան հաւանել։ Աստ-
ուած մինչև անդամ կ'առաջ զքեղ յանձնել
անձդ անոր ձեռքքը և նոյլ անոր վրկել զքեղ։
Բոլորովին քենէ կախեալ է քու վրկութիւն կամ
չվրկութիւն։ Եթէ ունիս յօժարութիւն վրկուե-
լու, Աստուած ևս առաւել յօժար է վրկել
զքեղ։ Վասն որոյ կրնաս վրկուիլ հիմ։ Քու

ընելու բանդ չէ կենալ և աղաղակել անոր աղաշելով որ փրկէ զքեղ։ Նա այնչափ մօտ բերած է քեղ կենաց-նաւակը որ բաւական է միայն մի քայլ առնուլ ապահովելու քու փըր կութիւնդ։ “Մի ըսեր քու սրտիդ մէջը, Ո՞վ պիտի ելէ երկինքը, (այսինքն Քրիստոսը իջեցընելու։) կամ թէ Ո՞վ պիտի իջնէ անդունդը, (այսինքն Քրիստոսը մեռելներէն հանելու։) Հապա ի՞նչ կ'ըսէ։ Խօսքը քեղի մօտ է, քու բերնիդ մէջը և քու սրտիդ մէջն է, այսինքն հաւատքին խօսքը որ մենք կը քարողենք։ Ինչու որ եթէ քու բերնովդ Յիսուսը Տէր խոստովանիս, ու քու սրտիդ մէջը հաւատաս թէ Աստուած զանիկա մեռելներէն յարուց, պիտի փրկուիս։ (վասն զի սրտով կը հաւատայ մէկը արդարանալու, ու բերնով կը խոստովանի փրկուելու։) Քանզի Գիրքը կ'ըսէ, Ամէն ով որ անոր հաւատայ՝ պիտի չամչնայ։” Հռովմ։ Ժ. 6—11։

Դիտելու ենք նաև թէ երբ այս փրկութիւնը տեղի կ'ունենայ, է յանկարծական և լիակատար. դու կամ կենաց-նաւակին մէջ ես, կամ չես. բայց եթէ չես կենաց-նաւակին մէջ, տակաւին կորսուած ես։ Թերես երկար ատենէ հետէ հակառակ կեցած ես անոր մէջ մըտնելու հրաւերին, և թերես շատ երկար ժամանակ անցնի մինչև որ համոզուիս թէ

ստուգիւ չկայ ուրիշ ճամբայ աղատելու. բայց ժամանակը երբ քու փրկութիւնդ ստուգիւ տեղի կ'ունենայ, այն վայրկեանն է որ գուն բոլորով սրտիւ կ'ընդունիս հրաւերը։ Անատեն, երբ թէ կը դնես ոտքդ կենաց-նաւակին վրայ, և այդ վայրկեանն է որ կ'անցնիս մահուանէ ի կեանս։

Այս օրինակը կը բացատրէ նաև հաւատոյ հարտարութիւնը և եղանակը որով հաւատքը կ'ապահովցունէ քու փրկութիւնդ։ Հաւատքը չունի արժանիք ըստ ինքեան, բայց կը փրկէ զքեղ, քանզի կը միացունէ զքեղ Քրիստոսի հետ։ Յորչափ չես գանուիր կենաց-նաւակին մէջ, անկէ օդուտ մը չես վայելեր, վասն զի չկրեր քու ծանրութիւնդ։ Քեղ չէ փոյթ թերես այժմ, թէ ինչ ծախքով պատրաստուած է այն, կամ թէ ինչպէս ապահով կամ զօրաւոր կլնայ եղած ըլլալ, սակայն այն վայրկենին որ մանես անոր մէջ, անատեն քոյդ կ'ընես զայն։ Անոր իւրաքանչիւր տախտակը, իւրաքանչիւր գամը, և իւրաքանչիւր պարանը քեղի համար է. անոր ապահովութիւնն է քու ապահովութիւնդ, անոր զօրութիւնը ևս քուկդ է։ Եթէ կորսուի այն, դու ևս կը կորսուիս, բայց քանի որ կը լողայ ջրոյն երեսը, ապահով ես։ Ուր որ երթայ, հետը կը տանի զքեղ, և երբ կը համնի ցամաք, զքեղ ևս կը տանի

հոն ապահովութեամբ ։ Այսպիսի է նաև մեզաւորին և Քրիստոսի մէջտեղ յարաբերութիւնը ։ ցորչափ չենք հաւատար, օգուտ չենք քաղեր անոր արիւնէն, այլ ենք “բնութեամբ բարկութեան որդիք”, բայց այն վայրկենին որ կը նետենք զմեղ Անոր բազկաց մէջ, որ լայն բացուած են ընդունել զմեղ, այն վայրկենին կ'ըլլանք անոր հետ մի ։ Երբ մեռաւ նա, մեռանք մենք անոր հետ, և երբ յարեաւ նա, մենք ևս յարեանք անոր հետ որպէս զի կենաց նորոգութեան մէջ պարտինք ։ Հո. 4։ Եփես. Բ. 5, 6։ Կող. Բ. 10, 12։

Երբ Աստուծոյ արդարութիւնը տեղը գնաց անոր մահուամբ, տեղը գնաց մեղի համար, և երբ Աստուծ հաճած է անոր, մեղ ևս հաճած է ։ Անոր միրտութիւնն եղաւ մեր մկրատութիւնը, անոր հնազանդութիւնը՝ մեր հնազանդութիւնը, անոր մահն եղաւ մեր մահը, վասն զի ամէն ինչ որ ըրաւ նա և ինչ որ կրեց՝ մերն էին ։ Վասն որոյ ցորչափ կ'ապրի Քրիստոս, պիտի ապրինք և մեք անոր հետ, վասն զի ոչ ոք անոր անդամներէն կրնայ կորսուիլ. և երբ կը թագաւորէ նա, մեք ևս պիտի թագաւորենք անոր հետ վասոօք ։

Դ. ՏԱՊԱՆԸ ԵՒ ԶԲՀԵՂԵՂԻ

Յիշեցէք տապանին և ջրհեղեղին պատմու-

թիւնը ։ Աստուծած հին ժամանակը մահուան դատապարտած էր աշխարհն ամբողջ, այնպէս որ անկէ հարիւր քան տարի ետքը պիտի գար ջրհեղեղ և ջնջէր երկրիս երեսին վրայ գըտնուած բոլոր շնչաւորները ։

Նոյ էր արդար մարդ, և Աստուծած, որպէս զի աղատէր զնա մօտալուտ կորստենէն, հրամայեց անոր շինել տապան մը որ լողար ջրոց վրայ, և բոլոր անոնք որ պատսպարուէին անոր մէջ՝ բերէր նոր աշխարհը ջրհեղեղին ջուրերը քաշուելէն և հին աշխարհին ընկլմելով կորսուելէն ետքը ։ Տապանին շինուիլը և անոր վերաբերեալ ամէն բաներուն պատրաստուիլը նախատիպ օրինակ է ուրեմն Քրիստոսի, ինչպէս այժմ կը ներկայացուի Աւետարանին մէջ՝ Երբ Նոյ և անոր ուստերք և դստերք հրաւիրուեցան մտնել տապանը, չունէին ընել ուրիշ բան, բայց եթէ ներս մտնել բաց դռնէն, և իսկոյն կ'ըլլային ապահով ։ Երբ անձրևն սկսաւ իջնել, և ծովիս սկսաւ ուռիլ բարձրանալ, անոնք որոց տուներն էին լերանց վրայ կը գթային թերեւս այնպիսեաց վրայ որ կը բնակէին դաշտերը, և սակայն չէր ըներ տարբերութիւն թէ որչափ բարձր կամ ցած տեղեր կը բնակէին անոնք ։ Եթէ չմեկնէին իրենց տուներէն և չմտնէին տապանը, անշուշտ պիտի կորսուելին անոնք ։ Այս է ճիշդ օրինակ

Քրիստոսով փրկութեան : Այն չէ խնդիրը թէ
ո՞րչափ բարի կամ ո՞րչափ չար ես դուն , այլ
այս՝ թէ Քրիստոսի մէջ ես : Թերեւս դու ես
շատ յարդելի և ուղիղ բարոյական ունեցող
անձ մը որ անթերի կը կատարես պարտակա-
նութիւններդ աշխարհիս մէջ և բարի օրինակ
կը հանդիսանաս բոլոր անոնց որ են շուրջդ :
Թերեւս մարդիկ կը կարծեն դժոնէ զքեղ ապահով
վիճակի մէջ, և թէ, եթէ դու չիրկուիս , քիչ յոյս
կրնայ ըլլալ որ և իցէ ուրիշ անձի փրկուելուն :
Բայց բոլոր այս գաղափարները սխալ են, վասն զի
եթէ դու չդիմես առ Քրիստոս , մէկդի դնելով
քու անձնական արդարութիւնդ , և չապաւի-
նիս միայն անոր արդարութեան , պիտի չու-
նենաս լաւագոյն վիճակ քան Նոյի ժամանա-
կակցացը , որք կը բնակէին հեռին բլուց վրայ ,
և անոնց շահն էր այս միայն որ ուրիշներէն
ետքն ընկղմեցան : Ջրոց հեղեղը բարձրացաւ
բարձրագոյն բլուրներէն վեր , և ամէն անսնք որ
չէին դտնուեր տապանին մէջ , կորան : Եւ ահա
այսպէս կը բարձրանայ Աստուծոյ արդարութիւ-
նը մարդոց բարձրագոյն արդարութենէն վեր ,
և վայ անոր որ կ'ապաւինի այս վերջնոյն :

Արդ՝ Երբ փրկուեցան տապանը մանողնե-
րը : Տակա՞ւ էր այն փրկութիւն թէ անմիջա-
կան : Անմիջական փրկութիւն էր այն : Յորչափ
անոնք դուրսն էին տապանէն , չունէին լա-

ւագոյն վիճակ քան զայլս , և եթէ ջրհեղեղը
դար մինչ անսնք էին հոն , անշուշտ պիտի
կորսուէին : Անոնք մի քայլ միայն առնլով
բոլորովին տարբեր վիճակ մը պիտի ունենա-
յին , և միայն այն քայլով փրկուեցան : Այն
վայրկենին որ մտան տապանին սեմէն ներս ,
անցան մահուանէ ի կեանս : Այն էր վայրկե-
նական և ոչ յամր կամ աստիճան առ աստի-
ճան դարձ :

Հին կտակարանի այս նախատիպ օրինակը
մասնաւոր արժէք ունի իբրև բացատրող քա-
ւութեան բնութիւնը : Տապանն եղաւ միջոց
փրկել զնոյ , բայց Նոյի փրկութիւնը չեղաւ
ջրհեղեղին բնութիւնը կամ տարածութիւնը
փոխելով : Ջրհեղեղն էր նոյն՝ թէ՛ գտնուեր և
թէ՛ ոչ՝ տապան , վասն զի Աստուծոյ արդարու-
թիւնը տեղն երթալու էր : Եթէ՛ Նոյ փրկուելու էր ,
փրկուելու էր ջրով և ոչ ցամաքով , վասն զի
չէր կրնար ըլլալ ցամաք երկիր մինչև չանց-
նէր ջրհեղեղը : Մարդիկ կը կարծեն թէ Քրիս-
տոսի մահն աւելի թոյլ տուող կ'ընէ զԱստ-
ուած մեղքի նկատմամբ , և թէ՛ եթէ մարդիկ
ջանան միայն ընել ամէն ինչ որ կրնան մեղք
չդորձելու մասին , անտես պիտի ընէ շատ մը
փոքր մեղքեր վասն Քրիստոսի : Բայց չկրնար
ըլլալ այս : Աստուծոյ սէրն առ Նոյ , մեղմել
շտուաւ Անոր ջրհեղեղը , այնպէս որ ողողէր

կամ ծածկէր միայն ցած դաշտերը և մարդիկ կարող ըլլային փախչել աւելի բարձր տեղեր ։ Ջրհեղեղն եկաւ իւր բոլոր սասակութեամբ, բարձրանալով բարձրագոյն լեռներէն վեր, այնպէս որ ոչ ոք կրնար գտնել տեղի ապաստանի ։ Այսպէս է նաև Աստուծոյ բարկութեան հրեղէն հեղեղը, որ պիտի ծածկէ մեղաւոր աշխարհը ։ Այն հեղեղին խորութիւնը կրնայ զանազանիւ մարդոց չարութեան աստիճանին համեմատ ։ Բայց մինչեւ իսկ եթէ մեղաւորը ելլէ բարձրագոյն տեղեր, եթէ նա Քրիստոսէ դուրս է, պիտի հասկնայ վերջապէս թէ չէ բարձր այնքան որ բաւական ըլլայ ազատիւ կամ փախչել Աստուծոյ դատաստանէն ։

Մինչեւ անդամ նոյն իսկ տապանը նշաւակ էր փոթորկին. անձրեւ վերէն և հեղեղք ներքեւն բանի մը չէին խնայեր, երբ ալիքը կատազաբար կը զարնէին անոր քովերուն և իր թէ կ'ուզէին թաղել զայն իրենց մէջ ։ Մի միայն պատճառը թէ ինչու համար աղատեցան անոր մէջ գտնուողներն, այս էր, վասն զի տապանը կարող էր կրել իւր մէջ պատճառը թէ ինչու համար աղատեցան անոր մէջ գտնուողներն, այս էր, վասն զի տապանը կարող էր կրել իւր մէջ պատճառը ծանրութիւնը ։ Այսպէս է նաև Քրիստոս ։ Կը փրկէ զմեղ՝ ոչ վասն զի կը կրէ անոր աւելութիւնը չէ, վասն զի կարևոր է միւսներուն չափ ։ և է այս, թէ անկարելի է օդուու ժամանակ, ենէ մեղաւորը որ Լ իցէ միշտ չնոյնանոր չոնին հետ ։

իստու, այլ վասն զի ինքն անձամբ կը կրէ անոր բոլոր վճիռը ։ Ինչպէս Մարդ նոյնպէս և Աստածած ըլլան էր պատճառ որով կարող եղաւ նա չընկճել փոթորկէն ։ Նման տապանին՝ անկարելի էր անոր ընկղմել, վասն որոյ վեր բարձրանալով Աստուծոյ բարկութեան ջրհեղեղէն, կը տանի իւր ժողովուրդը երկնային նաւահանգիստն ապահովէս ։

Ե. ԶՈՀԵՐԸ

Քրիստոսի գործին նախատիպ օրինակը և Հինկանակարանի՝ շատ յարդի են, վասն զի անմեր կը լուսաբանեն վարդապետութեանց կէտեր շատ պարզ կերպով, և այնպէս գիւրահասականալի ոճով որ մինչեւ իսկ տղայք կրնան հասկընալ ։ Անոնց նշանաւորագոյնն էր այլեւ այլ տեսակ արիւնալից զոհերու օրէնքը ։ Եւ զլիսաւոր վարդապետութիւնք զորս կը սորվեցունէին անոնք և կը սորվեցունեն ցարդ, են առ թէ առանց արիւն թափուելու չկրնար ըլլալ մեղաց թողութիւն ։ և ԵՇԻՐՈՒՌ՝ թէ մեղաւորը կը փրկուի եթէ անոր աւելութիւնը մէջ Ասկայն այն նախատիպ օրինակաց մէջ կայ ուրիշ կէտմը որ զանց առնուելու չէ, վասն զի կարևոր է միւսներուն չափ ։ և է այս, թէ անկարելի է օդուու ժամանակ, ենէ մեղաւորը որ Լ իցէ միշտ չնոյնանոր չոնին հետ ։

Կային այլ և այլ եղանակք որովք կը ներւ կայացուէր այդ նոյնութիւնը : Ամենէն սովորական եղանակն էր ձեռուըները դնել զոհուելու կենդանոյն վրայ , և խոստովանել անոր վրայ մեղքերը որոց պատճառաւ այն զոհը մատուցմանողն արժանի էր մեռնելու : Ուանց ասոր զոհը օգուտ չէր ըներ մատուցմանողին , վասն դի մեղքերը տակաւին պիտի մնային մեղաւորին զլխոյն վրայ առանց քաւուելու՝ զոհ եղող անամոյն մահուամբ :

Զատկի զոհի ատեն այս նոյնացումը կը ներւ կայացուէր գառին մսէն ուտելով , բայց առաւել մասնաւոր կերպով՝ սրսկելով անոր արիւնէն դրանց սեմերուն և դրանդեաց վրայ : Եթէ չըլլային այս բաները , սատակիչ հրեշտակը պիտի մանէր տներէն ներա և սպաննէր անդրանիկները մինչև անգամ խրայէլացւոց :

Յաճախ հարկ էր ոչ միայն թափել արիւն , այլ արարողութեամբ մը , կամ անցնելով մորթուած կենդանոյն կտորներուն մէջէն , և կամ սրսկուելով անոր արեամբ , ըլլալու էր այն կենդանոյն հետ ժողովուն նշան մը , որպէս զի քաղէր մեղաւորը զոհէն օգուտ :

Յայտնի է թէ այս օրինակներն ինչպէս կրնաս դործնականի վերածել քեզի համար : Դու ես մեղաւոր արժանի յաւիտենական մահուան , թիսուս ըրաւ քաւութիւն թափելով իւր արիւ-

նը , որ բաւական է փրկել համայն աշխարհ : Բայց դու չես կրնար օգտիլ այդ քաւութենէն , մինչև չընդունիս զնա իբրև քու Փըթկիչդ , և այսպէս չնոյնացունես զքեզ անոր հետ որպէս զի մեռած ըլլաս անոր հետ : Անատեն քու ձեռքդ կը դրուի անոր զլխոյն վրայ , և անատեն անոր արիւնը կը սրսկուի սրտիդ սեմին և դրանդեաց վրայ :

Զ. ՊՂՆՁԷ 028

Երբ խրայէլ ապստամբեցաւ յանապատին , Աստուած զրկեց ժողովրդեան մէջ կիզող օձեր , և անոնցմէ հաղարաւորներ մեռան օձերուն խայթուածէն որ էր մահացու : Բայց երբ ժողովուրդը զլչաց իւր մեղաց վրայ և աղօթեց որպէս զի աղատէր այն պատուհասէն , Տէրն ըսաւ Մովսիսի , “Քեզի կիզող օձ շինէ , ու զանիկա ձողի մը վրայ դիր . և ըլլայ թէ ով որ խածնուի անոր նայի ու ապրի : Եւ Մովսէս պղնձէ օձ մը շինեց , ու զանիկա ձողի մը վրայ դրաւ , և եղաւ որ օձ մը երբոր մարդ մը խածնէր , անիկա պղնձէ օձին նայածին պէս կ'առողջանար :” Այս պղնձէ օձն էր նախատիպ օրինակ Քրիստոնի , որ ըսաւ , “ինադր որ Մովսէս անապատին մէջ օձը բարձրացուց , անանկ ալ պէտք է որ Որդին մարդոյ բարձրանայ ” (Յովհ . դ . 14) , և դարձեալ , “Ես ալ

Երբոր Երկրէն բարձրանամ, ամէնն ալ ինծի պիտի քաշեմ՝” Յովհ. Ժ. 32:

Պղնձէ օձին պատմութիւնը կը լուսաբանէ ի մասնաւորի պարզ և միամիտ հաւատքը և անմիջական բժշկութիւնը։ Մեղքը կը ցուցուի կիզող օձերու օրինակաւ որ կը խածնէին ժողովուրդը և որոց խայթուածը մահ կը պատճառէր։ Պղնձէ օձը կը նշանակէ քրիչը որ եղաւ մեղք մեզի համար, թէպէտ չէր գիտեր մեղք, և բարձրացաւ խաչին վրայ։ Օձին խայթուածն էր մահացու, և մի միջոց միայն կար անկէ բժշկուելու։ անոնք որ կը խայթուէին՝ նայելու էին պղնձէ օձին, և այն վայրկենին որ կը նայէին անոր՝ կը բժշկուէին։ Հարկ էր օձը բարձրացունել, բայց կար ուրիշ բան մի ևս որպէս զի բժշկութիւն յառաջ գար։ Եթէ խրայէլացիք հաւատացած չըլլային Մովսիսի, և եթէ բնաւ չդարձունէին իրենց աշուըներն պղնձէ օձին երբ կը խայթուէին, անոնց և ոչ մին պիտի բժշկուէր։

Կը թուի թէ օձին նայել մամնաւորապէս հրամայուեցաւ իբր օրինակ միամիտ հաւատոյ։ Հաւատոյ ուրիշ օրինակներ քան նայելն աւելի դժուարին գործեր են, զոր օրինակ, անեւ տապանը, ունեւ զեւու զոհին գլխոյն վրայ, և արիւն որպէտ դրան սեմոց և դրանդեաց վրայ։ Բայց հոս չկայ ուրիշ բան, բայց եթէ նայել։

Միջոցին պարզութիւնն է որ մարդիկ չեն ուզեր ընդունել բժշկութիւնը։ Անոնք չեն կարող հասկնալ թէ ի՞նչպէս յառաջ կու գայ այնպիսի մեծ արդիւնք այսպիսի փոքր բանէ։ Անոնք կը նմանին Ներմանայ Ասորւոյ, որ յօժար էր ընել մեծ բաներ բժշկուելու համար իւր բորստութենէն. բայց երբ մարդարէն ըստ անոր երթալ և լուսացուիլ ի Յորդանան, գնայ մէկդի սաստիկ բարկացած։ Մարդիկ այնպիսի կրօնք կ'ուզեն որ իրենց ընել տայ բան մը, այնպէս որ երբ ընեն զայն, համարին թէ ամէն բան ըստ օրինի եղած է։ Որչափ որ գժուար ըլլայ կատարել գործը որ գրուի անոնց վրայ, այնչափ աւելի հաճելի է անոնց, վասնզի կը կարծեն թէ անսատեն աւելի արժանաւոր կ'ըլլան, և թէ իրենց բարի գործերն աւելի շատ կ'ըլլան քան ինչ որ կ'ընդունին։ Անոնց աւելի ընդունելի է կրել խիստ ապաշխարանք, կամ կատարել երկար ուխտագնացութիւն։ ուստի երբ Աւետարանը կ'ըսէ անոնց թէ չեն կրնար ընել իրենց փրկութեան համար և ոչ ինչ, և թէ փրկութեան մի միայն պայմանն է պարզ հաւատք ի Տէր Յիսուս Քրիստոս, և վստահութիւն։ Թէ նա արդէն ըրած է ամէն բան մարդոց փրկութեան համար, կը խորհին թէ չեն կրնար համարձակել հիմնել իրենց հոգւոյն փրկութիւնն այսպիսի պարզ միջոցի վրայ։

բայց հոս , անապատին օձին պատմութեան
մէջ , հաւատք կը ներկայացուի իւր պարզագոյն
պայմանաւ , և չէ այլ ինչ բայց եթէ նոյնէւ-
“ինծի նայեցէք որ փրկուիք , ” խօսքին մէջ
կը բովանդակի Սւետարանն ամբողջ ինչպէս
իւր բոլոր պարզութեամբ , նաև իւր բոլոր զօ-
րութեամբ , և միանդամայն կը պարունակէ
ճշմարիտ հաւատոյ բոլոր սկզբունքը : Այն պարզ
նայելը կը ցուցնէր թէ խորայէլացիք դիտէին
իրենց վտանգը , և թէ չունէին ուրիշ յոյս ,
նաև թէ կը հաւատային Մովսիսի խօսքին ,
վասն զի կ'ընէին ինչ որ պատուիրեց անոնց
Մովսէս : Եթէ խորայէլացիք չհաւատային ,
պիտի չնայէին . և սակայն միայն հաւատալը
պիտի չբժշկէր օձէ խայթուողները , եթէ
չգործէին իրենց հաւատոյն համաձայն , և չդար-
ձունէին իրենց աչուրները յուսով դէպի պը-
ղընձէ օձը :

կը գանենք հոս նաև օրինակ մը բժշկութեան
ստուգիւ և անմիջապէս կատարուելուն : Հոգ
չը թէ խորայէլացին շատ կամ քիչ խայթուած-
ներ ընդունած էր , և ոչ իսկ թէ թոյնը ո՛րչափ
թափանցած էր իւր մահացու ազդեցութիւնն
անոր մարմնոյն մէջ : Եթէ ունէր նա կեանք
նայելու բաւական , այն նայուածքը բաւական
էր , և այն նայուածքը կ'ազատէր զնա : Թերեւ
անոր մարմինն ուռած էր , և անոր անդամներն

էին անկարող իրենց պաշտօնը կատարել ,
թերեւս կը տանջուէր նա տենդի տոչորիչ ծա-
րաւէն կամ մահուան գեղին դոյնն արդէն
տարածուած էր անոր երեսին վրայ . բոլոր այս
բաներուն մէջ եթէ միայն կարող էր դարձու-
նել իւր բացավառ աչուրները պղնձէ օձին վրայ ,
նոյն վայրկենին թոյնը կը կորանցունէր իւր զօ-
րութիւնը և օրհասականը կը բժշկուէր անմի-
ջապէս :

Թերեւս խայթուողը շատ թեթև բանի տեղ
դրաւ խայթուածն ի սկզբան , կամ երբ իմա-
ցաւ թէ իւր վիճակը կը ծանրանար , թերեւս
բժշկիներու դիմեց , և արհամարհեց թէ պղնձէ
օձ մը պիտի բժշկէր զնա : Թերեւս ուրիշներ
շատ աղաչեցին անոր , կամ մինչև իսկ վախ-
ցուցին զնա թէ աղետալի պիտի ըլլար իւր
վախճանը , և միանդամայն ինքն ևս անձին փոր-
ձառութեամբ հասկցաւ թէ բժշկուելու վի-
ճակի մէջ չէ , այլ աւելի գէշ կ'ըլլայ որչափ
շատ ժամանակ անցնի : Թերեւս բոլոր այս բա-
ները եղան անոր օձին գառնալէն առաջ , բայց
անոնք դարձին մասը չէին . և պղնձէ օձը չէր
պատճառ որ խայթուողը կը յապաղէր նայել
անոր : Եւ մեղաւորին ապաշխարութիւնը տեղի
կ'ունենայ միայն անատեն որ կը փոխէ իւր
միտքը , և այն վայրկենին՝ որ կը նայի , կը փըր-
կուի :

Ե. ՀԱՐՍԸ ԵՒ ՓԵՍԱՆ

Եկեղեցին կը կոչուի հարսն Քրիստոսի, և
այս ուրիշ քաղցր օրինակ է մեր ընդ Քրիս-
տոսի միութեան, և կը բացատրէ, աւելի լաւ
քան որչափ ուրիշ օրինակներ, ոչ միայն փա-
փուկ սէրը երկուստեք, այլ նաև մեղաւորին
վիճակին փոփոխութիւնը որ կ'ըլլայ դարձի
ատեն : Ճշմարիտ է թէ Եկեղեցւոյն վրայ
կը խօսուի հաւաքականապէս իբրև հարսն
Քրիստոսի, բայց ինչ որ ճշմարիտ է ամբողջին
համար, ճշմարիտ է նաև զայն կազմող մասսանց
համար, այնպէս որ կընանք համարել մեղա-
ւորը միացեալ Քրիստոսի հետ ամուսնութեամբ
իւր դարձին ատենը :

Այս ամուսնութենէն առաջ հարսը մինչև
իսկ քան զմուրացիկս ստորնագոյն է . ճնշուած
է պարտուց ներքեւ հատուցած չըլլալով մինչև
անգամ այնպիսի պարտքեր զորս հատուցանել
կարող էր : Բայց այն վայրկենին որ կ'ընդունի
զՔրիստոս իբրև իւր փեսայն, անմիջապէս անոր
աստիճանը կը բարձրանայ, և կ'ըլլայ բաժա-
նորդ թէ՛ անոր ախտղոսին և թէ՛ ստացուա-
ծոց : Եթէ թագաւոր մը ամուսնանայ գերւոյ
մը հետ, այն վայրկենին որ կ'ամուսնանայ,
կ'ընէ զնա թագուհի . և ինչպէս որ այր մը
իւր կնոջ պարտքերն ևս իւր վրայ կ'առնու-

կամ պատասխանատու կ'ըլլայ անոնց, կինը
կ'ըլլայ բաժանորդ անոր բոլոր պատուոյն և
հարստութեան, և այլ ևս չպահանջուիր անկէ
առջի պարտքերը, վասն զի անոնք անցան իւր
էրկանը որ յանձն կ'առնու լիովին հատուցա-
նել զանոնք : Ամուսնանալէն առաջ կինը կրնար
որ եիցէ ժամանակ բոնուիլ և բանտ նետուիլ,
բայց ամուսնանալէն ետքը այս կարելի չէ ըե-
լալ այլ ևս, վասն զի անոր այրն է այն անձը
որուն դիմել պէտք է :

Այս ճշմարիտ է ըստ ամենայնի իբրև օրի-
նակ՝ յուցնելու համար մեղաւորին դարձի-
վայրկենին Քրիստոսի հետ միանալէն ծագած-
արդիւնքը : Դեռ այսպէս չմիացած Քրիստոսի
հետ, ենթակայ է նա դատապարտուելու Աս-
տուծոյ արդարութենէն զոր տեղը տանելու
չունի միջոց : Բայց այն վայրկենին որ կը դառ-
նայ առ Աստուծած, կ'աղատի իւր պարտքէն,
և Քրիստոսի բոլոր հարատութիւնը կ'ըլլայ
անորը : Նման գերւոյն որ ամուսնութեամբ
կ'ըլլայ թագուհի, մեղաւորը միանալով Փրկչին
հետ, կ'ըլլայ իշխան երկնից, և իբրև ժառան-
գակից Քրիստոսի կը ստանայ ամէն բան որ
կը գանուին հոն, և մինչև անդամ կը բազմե-
անոր ալթոռին վրայ :

Ը. ԵՐԿՈՒ ՊԱՐՏԱՊԱՆՔ

կայ ուրիշ առակ մի ևս փրկուտոսի առակներէն, զոր պէտք է յառաջ բերել չնորհաքով փրկութեան նախատիպ օրինակները լրացունելու համար, առ ի լուսաբանել թէ ինչ բաներ ըլլալու են մեղաց թողութենէն առաջ կամ ետքը: “Մէկ փոխ տուող մը երկու պարտական ունէր, մէկը հինգ հարիւր դահեկան պարտք ունէր, ու միւտը յիսուն: Եւ որովհետեւ հատուցանելու կարողութիւն չունէին, երկուքին ալ չնորհեց. հիմա զրուցէ, Անոնցմէ ո՞րը աւելի պիտի սիրէ զանիկա: Պատասխան տուաւ Սիմոն ու ըսաւ, ինծի ասանկ կ'երենայ, թէ որուն որ շատ չնորհեց: Ան ալ ըսաւ անոր, Ուղիղ դատեցիր:” Ղուկ. է. 41—43:

Դիտէ հոս թէ այն պարտապանաց երկուքին ևս պարտքը չնորհուեցաւ երբ չունէին հատուցանելու բան մը: Յորչափ ըլլար որ ևիցէ ակնկալութիւն հատուցանելու, կամ մինչև իսկ մասամբ իսիք հատուցանելու, անոնց պարտքը պիտի չնորհուէր, բայց այն վայրկենին որ հրատարակեցին զիրենք սնանկացեալ, չունենալով և ոչ ինչ հատուցանելու, անոնց պարտէրը կամ փոխ տուողը չնորհեց երկուքին ևս պարտքը:

Այս է ճիշդ օրինակ մը մեղաւորին վիճաւին իւր մեղաց թողութիւն առնէն առաջ: Ի սկզբան կը խորհի մեղաւորը թէ ըստ որում ունի պարտք միայն քանի մը դահեկան, դիւրաւ պիտի յաջողի հատուցանել զայն բոլորովին, և վասն որոյ կ'ըսէ, “Համբերէ ինծի և ամէնը քեղի կը վճարեմ:” Եւ սակայն կը տեսնէ հետզհետէ թէ իւր պարտքը շատ աւելի մեծէ, և իւր հատուցանելու կարողութիւնը շատ նուազ քան որչափ կը կարծէր, և յետոյ կը խորհի պայման մը դնել, այնպէս որ թէպէտ կարող չըլլայ հատուցանել ամբողջ պարտքը, կարող ըլլայ հատուցանել անոր մէկ մասը, թերեւս մէկ ոսկիին փոխարէն յիսուն դահեկան կամ քսանևհինգ և կամ գէթ հինգ դահեկան: Այսու ամենայնիւ բոլոր այս բաները ոչ խաղաղութիւն կը հաստատեն պարտատէրին և պարտապանին մէջտեղ, և ոչ ընդունելի կարգադրութիւն մը յառաջ կուդայ անոնցմով: Արդար Տէրը չկընար դնել այնպիսի պայման կամ դաշինք, նաև դիտէ թէ մեղաւորը չունի որ և իցէ բան իւր պարտքը չնշելու:

Մասամբ մը մարդկային պրտին բնական հըպարտութիւնը և մասամբ մը Աւետարանին պարտութիւնը և մասամբ մը Արքունութիւնն է, որ շատ մը փրկուելու փափաքող հոգիներ չեն փրկուիր, մինչ այսպիսիք կընային իսկոյն թողութիւն ստա-

նալ իրենց մեղաց, եթէ լքանէին հատուցանեւ լու բոլոր փորձերը, և ցուցնէին զիրենք իրեկ յետին աստիճանի մասնկութեան մէջ, բնաւ չունենալով բան մը որով հատուցանէին իրենց պարտքը։ Վայելուչ բարոյական կեանք մը, կատարել կրօնական պարտականութիւններ, Սուրբ Գիրք ընթեռնուլ, յաճախ մասնակցել հաղորդութեան սեղանին, ծոմապահութիւն, ողորմութիւն բաշխել, կրօնական պիտոյից համար առատ ստակ տալ, բոլոր ասոնք և շատ ուրիշ բաներ ասոնց նման կը նկատուին իրեկ մասամբ հատուցում պարտուց որ գըրուած են Աստուծոյ յիշատակի գրոց մէջ։ Բայց ենթադրելով մինչև անդամ թէ բոլոր այս պարտականութիւնք կատարուէին անթերի, թէ անոնց ամէնքն յառաջ եկած ըլլային ուղիղ շարժառութէ և չըլլային մեղքով շաղախեալ, տակաւին չէին կրնար համարուիլ հատուցում անցեալ օրինազանցութեանց։ Քանդի եթէ մարդիկ զանոնք ամէնը կատարէին իսկ, ըրած չէին ըլլար ուրիշ բան բայց եթէ ինչ որ իրենց պարտականութիւնն էր։ Բայց քանի որ այն պարտականութիւնք կատարուեցան անկատար կերպով և շատ շաղախեալ մեղօք, արդիւնքը չըլլար ուրիշ բան, այլ այն գործերը փոխանակ պակսեցունելու պարտքը, միայն կ'աւելցունեն զայն։ Վասն որոյ պէտք է թողու

իսպառ կարգադրութեան կամ պայմանադրութեան բոլոր յոյսը, և մեղաւորը պարտի գալ առ քրիչն իրեկ մասնկացեալ և անօդնական, և միայն անատեն թողութիւն կ'ընդունի իւր մեղաց ձրի։

Բայց առակին միտքն է բացատրել գլխաւորապէս փոփոխութիւնը որ տեղի կ'ունենայ մեղաց թողութենէն ետքը։ Թողութիւն գըտնելէ առաջ մեղաւորը չունի սէր առ պարտատէրն իւր Աստուած, այլ զզուանք միայն։ Անոր հածելի չկրնար ըլլալ իւր պարտատիրոջ ընկերակցութիւնը, և խոյս կուտայ ամէն այն կերակցութիւնը, և խոյս կրնայ ըլլալ որ հանդիպի առիթներէն յորս կրնայ ըլլալ որ հանդիպի անոր։ Նոյն իսկ իւր պարտատիրոջ անունը անհաճոյ է անոր, վասն զի անոր անուան յիշատակութիւնը կ'արթնցունէ անոր մէջ պարտքին և բանտարկութեան դաղափարը։ Բայց երբ կը թողուին անոր մեղքերը, և Աստուած կը հաշտուի անոր հետ, չմնար այլ ևս թշնամութիւն և օտարացում։ Փոխանակ անոնց կու գան սէր և երախտադիտութիւն։

Այս երախտադիտութեան և սիրոյ խորութիւնը հարկաւ կը պատասխանէ մեծութեան պարտուց որ չնորհուեցաւ։ և այս կը բացատրէ ինչ որ չէր կրնար բացատրուիլ ուրիշ կերպով, թէ չարագոյն մեղաւորը երբ կը գառնայ իւր չարութենէն, շատ անդամ կ'ըլլայ նշանաւու

բագոյն ի սուրբս : Մեղաւոր կինը որ լուաց
ֆրկչին ոտուըները իւր արտասուօք , եղաւ
աւելի անձնանուէր և բարեպաշտ Քրիստոնեայ
քան զանոնք որ աւելի քիչ մեղք ունէին ներ-
ուելու :

Բայց մինչև իսկ այս չբացատրեր լիովին
փոփոխութիւնը որ աւելի կ'ունենայ դարձի
ժամանակ . քանզի եթէ այս ըլլար բոլորը ,
պիտի ըլլար կարճատե փոփոխութիւն : Անտեն
շուտով պիտի վերստին կենդանար մեղաց զօ-
րութիւնը , եթէ Աստուծոյ Հոգին իսկապէս
մտած չըլլար անոր սրախն մէջ և յառաջ բե-
րած չըլլար փոփոխութիւն ինչպէս խորհրդոց
և զգացմանց՝ նոյնպէս և բնութեան և բա-
րուց : Շատեր խարած են զիրենք համարելով
թէ ներուած են իրենց մեղքերը , թէպէտ բնաւ
տուած չեն զիրենք բոլորովին Քրիստոսի փըր-
կուելու համար իրենց մեղքերէն : Անոնք զգա-
ցած են ուրախութիւն և սէր , վասն զի և հո-
գին թէ հաշտուած են Աստուծոյ հետ , բայց
Ուրբ Հոգին բնաւ չմտաւ անոնց սրախն մէջ :
Վասն որոյ փոփոխութիւն չեղաւ անոնց բարուց
մէջ , և քիչ ժամանակէն ինկան մեղաց մէջ , և
անհետ եղան անոնց բոլոր ազնիւ զգացմոնք ,
յօդս ցնդեցան անոնց ուրախութիւնը և սէրը ,
և մինչև իսկ եղան չար քան զառաջինն :

Դիւրին է գրգռել զգացումները վառվուն

կերպով ներկայացունելով Աստուծոյ սէրը ,
կամ Քրիստոսի չարչարանքները , կամ մինչև
իսկ սուտ վատահութիւն տալով թէ մեղքը
ներուած է , և հոգին փրկուած : Բայց այս չէ
դարձ , և կը տեէ միայն առ ժամանակ մի .
փորձութեան ատեն պիտի իյնայ այնպիսին :
Ճշմարիտ դարձ բնաւ չըլլար բայց միայն ան-
ատեն երբ մեղաւորը բոլորովին կը նուիրէ զինք
Քրիստոսի և յօժար է զատուիլ իւրաքանչիւր
մեղքէ : Բայց երբ այս կ'ըլլայ , փոփոխութիւնն
է մնայուն , վասն զի Սուրբ Հոգին կը մտնէ
սրախն մէջ և կը բնակի հոն յաւիտեան : Ինչ որ
կը սկսի անատեն , է նոր ծնունդ և նոր կեանք ,
որ կը սպաննէ մեղաց իշխանութիւնը , և կ'ար-
թընցունէ սէր առ Աստուծած և ատելութիւն
թէպի մեղքը , որք բնաւ չկային առաջ :

Եւ սակայն երբ Հոգին յառաջ կը բերէ այս
փոփոխութիւնը , կ'ընէ զայն բանաւոր և իրա-
ւացի կերպով , իրական շարժառիթներով և
ոչ զգացումները դրգռելով միայն : Առանց
Աստուծոյ Հոգւոյն մարդկային հոգին մեռեալ
է , և ամէն ինչ որ յարմար է դրգռել մեր
սէրը և երախտազիտութիւնը , անկարող է ընել
սրախն վրայ որևիցէ իսկական տպաւորութիւն :
Բայց երբ Հոգին կը մտնէ սրախն մէջ , կու տայ
նոր կեանք , և այնուհետև նոր սիրաը կը զգայ
իրէն ներկայացուած փառաբերուն պարունակ , և ոչ միայն

կը գիտնայ թէ ինք վասթարացած է յաշս
Աստուծոյ, այլ նաև կ'ազդուի փրկչին սէրէն
առ ինքն որ է անալիման, և կը ձգուի անոր
իբրև իւր միակ յուսոյն, փոխանակ վանուելու
անկէ իբրև իւր ցասկոտ գատաւորէն :

Թ. ԶԲՐԻՍՏՈՍ ԸՆԴՈՒՆԵԼ

Յարդ ջանացի բացատրել և յուցնել քեզ
Սուրբ Գիրքէն թողութիւն մեղաց և վիկու-
թիւն անխտիր ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, և
ահա այժմ կը հրաւիրեմ զքեզ ընել որոշում
մը ընդունել զբրիստոս, որ է բոլոր խնդրոց
կարեորագոյնը : Թերեւս քու յաւիտենական
բախտ կախեալ է որոշմանէդ զոր այժմ ընել
կը յորդորեմ զքեզ, և թերեւս դու յաւիտե-
նականութեան անվախճան դարուց մէջ կամ
երկինքէն կամ դժոխքէն պիտի նայիս ետ
այս օրուան կամ նոյն իսկ այս ժամուն վրայ
որ կ'ընես քու վսեմ ընտրութիւնդ :

Յուցուցի քեզ թէ կրնաս ստանալ թողու-
թիւն բոլոր մեղացդ և ապահովել յաւիտե-
նական փրկութիւնդ, հիմա : Յուցուցի քեզ
թէ անցեալ կեանքդ, կամ այժմու վատթար
վիճակդ արդելք ըլլալու չէ, և թէ անկարող
լինելդ հրաժարել ի մեղաց՝ փոխանակ ըլլալու
զբրիստոս անմիջապէս չընդունելուդ պատ-
ճառ, մանաւանդ պատճառ է թէ ինչու համար

բացարձակապէս հարկ է որ ընդունիս զնա :
Յուցուցի թէ չպահանջուիր քենէ բան մը որ
չէ բոլորվին կարողութեանդ ներքեւ այս ներ-
կայ վայրկենին, եթէ միայն ունիս կամք ։ Վասն
որոյ խնդիրը թէ պիտի փրկուիս դուն կամ
կորսուիս, կամեալ է քու ընտրութենէդ նոյն
իսկ այս վայրկենիս :

Վասն որոյ ամենայն ծանրութեամբ կը դնեմ
խնդիրը քու առջեղ, և յիշեցունելով թէ
պատասխան պիտի տաս Աստուծոյ դատաս-
տանին մեծ օրը, կ'առաջարկեմ քեզ տալ
հիմա պատասխան հարցմանցու . “Յօժա՞ր ես
ընդունել զբրիստոս իբրև քու Փրկիչդ, և տալ
զքեզ անոր որպէս զի բոլորվին անորն ըլլաս :
Յօժա՞ր ես հրաժարել ամէն մեղքէ :”

Եթէ ըսես, “Ոչ, ես չեմ պատրաստուած
հրաժարել իմ բոլոր մեղքերէս, կամ բոլոր-
վին անձնատոր ըլլալ ֆրիստոսի . զոնէ կայ
մեղք մը որմէ հրաժարել չեմ յօժար այնպէս
որ ստուգիւ չունիմ յօժարութիւն ազատիլ
անոր իշխանութենէն,” կը պատասխանեմ :
Ուրեմն, բարեկամ, մենք կը զատուինք հոս
իրարմէ : Ես չունիմ աւետարան քեզի համար,
վասն զի նոյն ինքն Աստուած չկրնար վրկել
զքեզ ցորչափ այդ է քու որոշումդ, եթէ ոչ
պիտի դադարէր սուրբ Աստուած ըլլալէ : Ոհա-
ւոր ընտրութիւն է զոր ըրեր դուն, բայց ըրեր

զայն խորհելով, և այդ ընտրութիւնն ըլլալով իբր թէ նոյն խակ Յիսուս Քրիստոսի արեան առջև, կրնայ ըստիլ քեզի համար, “Ակուս քերուն յարեր է. զանիկա թող տուր:”

Բայց եթէ ըսես, “Ես կ'ուզեմ ընդունել զբրիստոս իբրև իմ Փրկիչս և բոլորովին նուիշել զիս անոր, որպէս զի աղատէ զիս իմ մեղքերէս. գիտեմ թէ չունիմ կարողութիւն զիս ուղղելու և թէ բոլոր իմ բարի գիտաւորութիւններս անօգուտ են. բայց եթէ Յիսուս հասնի ինձ օգնութեան, և դնէ իւր Հոգին իմ մէջս, ինչպէս խոստացած է, և տայ ինձ նոր սիրտ սիրել զնա և ծառայել անոր, կ'ընդունիմ անոր առաջարկութիւնը: Կ'ընդունիմ զբրիստոս իբրև իմ Փրկիչս, և կուտամ զիս անոր ճիշդ ինչպէս որ եմ, որպէս զի ընէ զիս ինչ որ կ'ուզէ որ ըլլամ ես:” Եթէ այս է պատասխանդ, ուրեմն կ'ըսեմ թէ դու ես Քրիստոսինը և Քրիստոս է քոյդ: Նա կուտայ քեզ այժմ յաւիտենական կեանք, քու բոլոր մեղքերդ ներուած են անոր արեամբ, և անոր Սուրբ Հոգին մտած է սրտիդ մէջ, այնպէս որ դուն հիմա ես տաճար կենդանի Աստուծոյն: Դու ես այժմ նոր արարած, Հոգիէն ծնած, դու չես այլ ես տէր քու անձիդ, դուն զնով ծախսու առնուեցար, ուստի փառաւորէ զԱստուած քու մարմնոյդ և հոգւոյդ մէջ որ անորն են:

Եթէ այսպիսի վիճակի մէջ կը գտնուիս, քու առաջին պարտականութիւնդ է երթալ Աստուծոյ և ըսել թէ ըրած ես այդպիսի որոշում մը: Աստուած շատ ժամանակէ հետէ աղաչած էր զքեզ որպէս զի դառնայիր անոր, և դուն շատ ժամանակ յապաղած էիր պատասխանել անոր: Դուն հիմա ունիս անոր տալր պատասխան մը, և նա կը սպասէ և կը փափաքի լսել քենէ: Ի՞նչ է զոր պիտի ըսես անոր: Գնա ի ծունը իջիր անոր առջև, և ըսէ անոր թէ կ'ընդունիս անոր սիրոյ հրաւերը. բայց յիշէ թէ աղաղակելու չես ողորմութեան համար այնպէս իբր թէ Աստուած արդէն շատ ժամանակէ հետէ պատարաստ չէր ողորմել քեզ: Փրկութիւնդ ոչ Աստուծմէ այլ քենէ կախում ունի: Քու պատասխանդ Աստուծոյ հրաւերին և ոչ Աստուծոյ պատասխանը քու աղաչանքիդ պիտի որոշէ քու փրկութիւնդ: Վասն որոյ մի պիտի որոշէ քու փրկութիւնդ: Վասն որոյ մի պաղումն եղաւ անոր կողմէն, մինչ բոլորովին քու կողմէդ եղած է: Եթէ ընդունած ես անոր ողորմութիւնը, չունիս պէտք աղաղակել անոր համար, վասն զի որչափ թախանձադին. ըլլայ աղաչանքդ՝ այնչափ աւելի անիրաւութիւն կ'ընես Աստուծոյ սիրոյն և փրկելու պատրաստ ըլլալուն: Շատ աւելի հաճելի պիտի ըլլար Աստուծոյ և շատ աւելի պատիւ ընդու-

նած պիտի ըլլար նա եթէ ըսէիր, “Տէր, կ’ըն-
դունիմ չնորհքդ,” քան եթէ ըսէիր, “Տէր,
կ’աղաչմ զքեղ տուր ինձ զայն ։” Ողորմու-
թեան համար այս թախանձադին աղաղակը ոչ
միայն անյարմար է վիճակին որուն մէջ կը գըտ-
նուիս, այլ նաև կը տանի թիւր արդեանց ։
Եթէ ընդունիս զբրիստոս այնպէս ինչպէս
կը ներկայացուի քեղ Աւետարանին մէջ, կ’ու-
նենաս զնա այն վայրկենին որ կ’ընդունիս զնա ։
Բայց եթէ սկսիս աղաչել անոր համար, չես
կրնար յուսալ թէ պիտի ունենաս զայն մինչև
որ Աստուած պատասխան տայ աղօթիցդ ։ և
բնչպէս զիտնալու ես թէ ե՛րբ կու դայ պա-
տասխանը ։

Երբ Արդեմելէք եկաւ գուրին բերանն ե-
րեմիայի քով և իջեցուց չուանն ըսելով անոր
դնել զայն իւր թևերուն ներքեւ, որ կարելի
ըլլար քաշել զնա գրէն վեր, եթէ Երեմիա
փոխանակ ընելու ինչ որ ըսաւ իրեն Արդե-
մելէք, սկսէր աղաղակել և աղաչել անոր որ-
պէս զի ողորմէր իրեն, Երեմիայի բոլոր աղա-
ղակները պիտի չընէին փոքր օգուտ մը իսկ,
և որչափ եռանդով և ողորմադին աղաղակէր
իսկ, այնչափ աւելի ձանձրոյժ պիտի զդար
Արդեմելէք, վասն զի Երեմիայի այն ընթացքը
պիտի ցուցնէր թէ Արդեմելէք զնա աղատե-
լու համար չէր եկած ։ Հաւատքը չէ պատճառ

որ կու տայ քեղ աղաղակել ողորմութիւն հայ-
ցելու, այլ հաւատք չունենալու, վասն զի եթէ
հաւատայիր թէ Աստուած իրօք կ’աղաչէ զքեղ
որ զբրիստոս ընդունիս, պիտի ընդունէիր զնա
իսկոյն ։

Մանաւանդ դիմէ առ Աստուած, ողբալով
անցելոյն մէջ անոր սիրալիր յորդորները զանց
ընելուդ վրայ ։ Ըսէ անոր թէ չես ընդդիմա-
նար անոր այլ ևս, թէ այժմ կ’ընդունիս ի ձեռն
բրիստոսի փրկութիւնը ուրախութեամբ, և ե-
րախտագիտութեամբ, և թէ անձդ բոլորովին
կը նուիրես անոր որ ընէ զքեղ ինչ որ կ’ուդէ
որ ըլլաս ։

Կը փափաքիմ որ առանց սպասելու ուրիշ
վայրկենի՝

ԸՆԵՍ ՀԻՄԱ ԻՆՉ ՈՐ ՊԻՏԻ ԸՆԵՍ

Երբեմն գժուարին է հոգւոյն իւր յոյսը հիմ-
նել Սուրբ Գրոց ընդհանուր վարդապետու-
թեանց վրայ, վասն որոյ աղէկ է մեղ մատու-
ցեալ փրկութիւնն ընդունելու ատեն առնուլ
Սուրբ Գրոց մէկ համարը որ կը պարունակէ
Աւետարանական հրաւերը, և ի գործ գնել
հաւատքը մասնաւրապէս անոր վրայ ։ Ըսել
չենք ուզեր թէ այս է մի միայն կերպը, սակայն
այս բանը կ’օգնէ փափաքող հոգւոյն առնուլ
իրեն մատուցուած փրկութիւնը գործածելով

նոյն իսկ Սուրբ Գրոց խօսքելն երբեւ երաշխաւորութիւն որոց վրայ հիմնենք մեր հաւատքը։ Այսպէս ընելով մեր սիրաը կը զգայ հաճելի վստահութիւն մը երբ ճիշդ մեր առջև կը դնենք Վստուծոյ մասնաւոր հրաւելները և կը հաստատենք մեր վստահութիւնն անոնց անփոփոխելի ճշմարտութեան վրայ։

Պասն որոյ կը յորդորեմ որ դորձածես նալաւտակիդ յարմար ընտրուած Սուրբ Գրքէն մասնաւոր համարներ ոչ միայն երբ առաջին անգամ քու հաւատքդ կը յայսնես Վստուծոյ, այլ ուրիշ անդամներ ես, երբ կ'ուզես հաւատքդ յայտնել Վստուծոյ։ Ըսել կ'ուզեմ, երբ ի ծունդ իջեալ կ'ազօթես առաջի Վստուծոյ, իիշես բառ առ բառ անոր այս ինչ կամ այն ինչ խոստումը, և ըսես Վստուծոյ թէ կ'ընդունիս անոր այն խոստումը։

Կան ոչ սակաւ յարմար համարներ ի Սուրբ Գիրս այս նպատակին գործածուելու բայց ես կինամ ցուցնել հոս երկու հատ միայն, իբրև օրինակ սրտին զիսոստամունս ընդունելուն։

1. “Եկէք ինծի, բոլոր յոգնած ու բեռնաւորածներ, և ես ձեղ պիտի հանդշեցընեմ։” Մատթ. ԺԱ. 28։

Քրիստոսի այս հրաւելը թող յիշուի աղօթքի մէջ և յետոյ աղօթողն ըսէ, մէջ և յետոյ աղօթողն ըսէ,

Տէր, այս է քու խոստումդ և հրաւելու բնձէ։

Ես յոգնած եմ, բեռնաւորած եմ, ես պէտք ունիմ հանդշելու։ Դու կը հրաւելես զիս գալ առ քեզ։ կը հրամայես ինձ գալ։ կու գամ այժմ, չունիմ ուրիշ մը որուն երթամ, և չկայ ուրիշ մը բաց ի քէն որ կարող ըլլայ տալ ինձ հանդիստ։ Ես այժմ կը հանդշեցունեմ իմ յոգնած հողիս քու վրադ, և կը հաւատամ այն բաներուն զորս խոստացած ես ինձ։ Դու պիտի տաս ինձ հանդիստ։


2. “Բու հոգդ Տէրոջը վրայ ձգէ, ու անքեզ պիտի խնամէ։” Սաղմ. ԾԵ. 22։

Գարձեալ այս խոստումը յիշելէն ետքը աշոթողը թող ըսէ,


Տէր, կ'ընդունիմ այս շնորհալից հրաւելը։ Դու գիտես թէ իմ բեռս է մեղքը, և թէ սա պիտի ճնշէ վրաս մինչև իջեցունէ զիս իմահ, եթէ դու վեր չառնուս զայն ինէ և չկրես փոխանակ իմ։ Դու կը հրամայես ինձ ձգել զայն քու վրադ, և ահա կը ձգեմ զայն քու վրադ, կը զայն փոխանակ իմ ինչպէս խոստացած ես, դու ես միայն այն էակը որ կը վերցունէ մեր բեռները։ Քեզ կ'ապաւինիմ ես, ողորմելի, անօդնական մեղաւորս, որպէս զի ոչ միայն վերցունես բեռս, այլ նաև պահես իմ անձու լստ խոստաման քում։

Եւ հիմա որ ես կը ձգեմ իմ բեռս քու վրադ քու հրամանիդ համեմատ, կը զգամ

վաստակութեամբ թէ այլ ևս չծանրանար այն
իմ վրաս . հիմա քու վրադ է : Բնաւ մի
թողուր որ վերստին առնում այդ բեռն իմ
վրաս :



1B 554



888

0024636

888

ՀՀ Ազգային գրադարան



NL0027636

